ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե-2509

«03» ապրիլի 2025թ.

«ԲԻԶՆԵՍ ԸՔԱՈՒՆԹԻՆԳ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Գ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ
(հասցե՝ ք.Երևան,Դավթաշեն 1թղ.27/12)

Հարգելի՛ տիկին Մարգարյան,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար կրակմարիչների, հեռուստացույցների, գրասենյակային աթոռների և բազկաթոռների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/02» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել են ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունում՝ Հավելված N 1, թերի է լրացված ընկերության հեռախոսահամարը և լրացված չէ ընկերության ռուսերեն լեզվով անվանումը:

2. 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընկերության կողմից eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում բացակայում են ընթացակարգի հրավերով սահմանված՝ «Ապրանքները պետք է լինեն չօգտագործված», «Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն», «Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 1 տարի» պայմանները:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև՝ ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի

8.11 կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի ապրիլի 04-ը ներառյալ համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/02» ծածկագրով գնման ընթացակարգի համակարգող՝ Մ.Հայրապետյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788